Յետոյ Ասլանը բացատրեց եւ այն, թէ որքա՞ն նշանակութիւն ունեն մեծ մարդկանց հագուստները: Գանահարութիւնը սովորական պատիժներից մէկն է արեւելքում: Երբ մի երեւելի պաշտօնակալին պէտք էր գանահարութեան ենթարկել, փոխանակ նրա անձը գանելու, տանում են նրա վերարկուն եւ հրապարակի վրայ ծեծում են:

— Երեւի, եթէ այդ վերարկուն թագաւորից ստացուած լինէր, չէին համարձակի այնպէս վարուել նրա հետ:

— Անտարակոյս: Բայց եւ այն պէտք է ի նկատի ունենալ, որ եթէ նահանգապետը մի տարի խալաթ չստացաւ, նա կը կորցնէ իր բոլոր նշանակութիւնը. այդ արդէն նշան կը լինի թագաւորի դէպի նա ունեցած սառնութեանը, եւ ժողովուրդը այլեւս նրանից չի վախենայ: Դու տեսար գիշերը այստեղի փաշային. չնայելով առաջնորդարանի սաստիկ տօթին, նա մեծ բաւականութեամբ հագած ունէր այն թանձր մուշտակը, որը այս տարի սուլթանից է ստացել:

Ասլանը բացատրեց ինձ, թէ որքան ուրիշ շահեր եւս կապուած են խալաթների բաշխման հետ: Խալաթ բերողները, ըստ մեծի մասին, լինում են արքունիքի սպասաւորները եւ սենեկապետները: Այդ մարդիկը ամենեւին ռոճիկ չեն ստանում: Բաւական էր նրանց մի այսպիսի ծառայութիւն կատարել, մէկի համար խալաթ տանել, եւ նրանց մի քանի տարոյ ռոճիկը կարելի էր միանգամից ստացուած համարել:

— Ինչպէս փաշայի քարտուղարինը, — ընդմիջեցի ես:

— Այո՛, նա եւս ռոճիկ չունի, կամ թէ ունի, անպատճառ շատ չնչին բան կը լինի: Նրա եկամուտները բխում են գլխաւորապէս այդ տեսակ յանձնարարութիւններ կատարելուց, երբ փաշայից մէկի համար ընծայ է տանում:

Սկսեալ սուլթանի պալատից, մինչեւ վերջին մուդիրի գրասենեակը, ամէն տեղ նոյն կարգերն են տիրում. մեծերը ընծաներ են տալիս փոքրերին եւ նրանցից փող են ստանում, եւ այսպէս կաշառակերութիւնն աստիճանաբար վերեւից իջնում է ցած: Հարցրէք այս եւ այն պաշտօնակալին, թէ որքա՞ն ռոճիկ էք ստանում: Նա ռոճկի մասին կամաչէ խօսել, որովհետեւ շատ չնչին է, բայց առանց ամաչելու եւ մինչեւ անգամ պարծենալով կասէ ձեզ, թէ տարին այդքան «եկամուտ» ունեմ: Բոլոր եկամուտները բխում են մթին աղբիւրներից եւ այնքան սովորական են դարձել, որ ամէն մի մեծաւոր, երբ պաշտօն է յանձնում իր ստորադրեալին, նրան կամ բոլորովին ռոճիկ չէ նշանակում, կամ եթէ նշանակում է՝ մի չնչին բան, բացարձակ ասում է նրան. «այդքանն ինձանից կը ստանաս, այդքան էլ եկամուտը կունենաս»: